# Բացատրագիր

Համաձայն տրված առաջադրանքի անհրաժեշտ է կատարել Երևանի Էրեբունի վարչական շրջանի Խաչիկ Դաշտենց փողոցի հենապատի վերանորոգում: Գոյություն ունեցող հենապատը ունի մոտ 316մ երկարություն, որը ձգվում է Խաչիկ Դաշտենց փողոցի ձախակողմյան մասով: Կոնստրուկտիվ կառուցվածքը իրենից ներկայացնում է՝ բուտաբետոնե ժապավենաձև հիմք, որի վրա իրականացվում է բուտաբետոնե թիկունքի շարվածք արտաքինից երեսպատված բազալտե ջարդոնով (էրեբունի շարվածք): Երկարատև տարիներ չի վերանորոգվել, ենթարկվել է կլիմայական ազդեցությունների, բազմաթիվ հատվածներում ունի գլխադիր բետոնի վթարված հատվածներ,արտաքին շարվածքի թափված տեղամասեր: Կան հատվածներ, որտեղ թիկունքի կողմից գրունտի սահելու հետևանքով ծածկվել է հողի շերտով:

Նախագծով նախատեսվում է կատարել գոյություն ունեցող բուտաբետոնե պատի վնասված մասերի քանդում և նոր բուտաբետոնե պատի իրականացում, վնասված բետոնե գլխադիրի քանդում և ե/բ գլխադիրի իրականացում, հենապատի ետնամասում ջրամեկուսացման իրականացում, դրենաժային համակարգի կառուցում: Նոր հենապատը էրեբունի շարվածքով երեսպատելու համար օգտագործել հին հենապատի շարվածքի քարերը: Նախատեսվում է նաև 2-րդ հենապատի վերանորոգում՝ իրականացնել հենապատի ց/ա սվաղ ցանցի վրա և ներկում ֆասադային ներկով,ինչպես նաև վնասված բետոնե գլխադիրի փոխում նոր բազալտե գլխադիրով:

| N/N | | ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ |
|---|---|---|
| 1 | ճՇ-1 | Ընդհանուր տվյալներ |
| 2 | ճՇ-2 | Գլխավոր հատակագծ Մ 1:100 |
| 3 | ճՇ-3 | 1-ին հենապատի փռվածք |
| 4 | ճՇ-4 | Կտրվածքներ, Ե/Բ գլխադիր, աշխատանքային ծավալներ |
| 5 | ճՇ-5 | 2-րդ հենապատի փռվածք , աշխատանքային ծավալներ |

## Շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ

- Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին.կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:

## Վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար պահանջվող լիցենզիաներ

Քաղաքացիական բնագավառում շինարարության իրականացում ըստ հետևյալ ոլորտների

1. Բնակելի , հասարակական և արտադրական

## Աշխատանքային ռեսուրսներ

1. Աշխղեկ ՝ Ինժեներ-շինարար «ԱՔՇ»,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով

## Տեխնիկական միջոցներ

1. Մեկ ինքնաթափ բեռնատար ավտոմեքենա:
2. Մեկ բուլդոզեր:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Երևանի էրեբունի վարչական շրջանի Խաչիկ Դաշտենց փողոցի հենապատի վերանորոգում<br>Պատվիրատու ՝ Երևանի քաղաքապետարան<br>Պատվեր՝ «ԵՔ- ԸԱՇՁԲ - 13/79-2» | | | |
| | | | | | | | |
| ՆԳԾ | Հ.Հովսեփյան | | | | | | |
| Նախագծ. | Ա.Եղիգարյան | | | Ճարտարապետաշինարարական մաս | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | | | 1 | 5 |
| | | | | Ընդհանուր տվյալներ | «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ | | |
| | | | | | | | |